

Գ Ի Ր
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ԱՌ ՏԻԱՐ ՄՈՒԾԵԼ ՑԱԿՈՒԹԵԱՆ

Հոգեկան անխառն ուրախութեամբ կը տեղեկանանք որ Հօրէնսի Ս. Խաչ Եկեղեց-
ւոյ Հոգեւոր Հովհանն ու ծխական Խորհուրդը որոշած են ձեզ պատուել՝ որպէս Երախ-
տագիտութիւն ձեր ունեցած Եկեղեցանուէր բազմամեայ ծառայութեան:

Դուք որպէս հաւատաւոր անդամ նոյն համայնքի եւ մօտ 25 տարիներ որպէս ան-
դամ ծխական Խորհուրդի՝ ձեր կարողութիւնն ու ժամանակը անսակարկ կերպով ի
սպաս դրած էք ծուխի քարգաւածումին եւ քարորութեան: Եւ այսօր, մենք Վստահ
ենք որ արդար հպարտութեամբ կը վայելէք շատ երկար տարիներու ձեր ծրագրում-
ներուն քարի արդիւնքները՝ երբ Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքը արդէն իսկ օժտո-
ւած է գեղեցիկ Եկեղեցիով եւ մշակութային կեղրոնվ, ուր կը զարգանան ու կը
կրթուին մեր նոր սերունդի հոգին ու միաբը՝ պատրաստուելով ապագայ դեկավար
պաշտօններու:

Ձեր նուիրեալ եւ անձնազոհ ծառայութիւնները օրինակ պէտք է ծառայեն իւրա-
քանչիւր հայու՝ որպէս զի ան աւելի սիրէ իր հայրենիքը, Եկեղեցին ու ժողո-
վուրդը:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց կը գնահատենք ձեր օգտակար ծառայութիւն-
ները: Կ'օրինենք ձեզ ու ձեր հարազատները, եւ կ'աղօթենք որ Տէրը բոլորիդ
պարզեւէ առաւել քաջառողջ եւ արդիւնաւոր տարիներ:

Սիրոյ ողջունիւ

Տաճարական Հայոց
ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ

Առաջնորդ

Նոյեմբեր 5, 1984, սիւ Եորբ, ս. 6.